




Ա. ՏԱՐԻ

ՀԱՆՔԴ, ՅՈՒՆԻՈՒԱՐ 28, 1928

ԹԻՒ 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

Ինչպէս որ ընտանիքի մը բոլոր անդամները պէտք է եկեղեցի երթան, նոյնպէս ալ անոնք պէտք է եկեղեցին իրենց հետ տունը բերեն: Տունի մէջ ալ պէտք է կանգնել խորան մը, որուն վրայ պէտք է շնորհապարտութեան գոհիւր և աղաչանքներ մատուցանել մեր երկնային հօրը:

Այս տունի մէջ խաղաղութիւն կ'արտադրէ, մաքուր կրօնասիրութիւն յառաջ կը բերէ, զօրութեամբ իրենց կը բառնայ և ընտանեկան հետքը կ'անուշացնէ: Օրուան յարմար տեսնուած ունէ մէկ որոշ ատենին ընտանիքին անդամները կը միանան, Ս. Գիրքէն կը կարդան և կ'երգեն. ապա ծնողքէն մէկը բոլոր ընտանիքը Աստուծոյ կը ներկայացնէ: Այս սովորութիւնը անգին բարիքներու պատճառ կը դառնայ, մանաւանդ պզտիկներու վերայ անոր ազդեցութիւնը շատ բարերար է:

Ախալ է այն գաղափարը թէ մանուկները Յիսուսի մասին պէտք է սորվիլ սկսին երբ արդէն յառաջացած են տարիքի մէջ: Ո՛չ, մանուկները շատ կանուխէն պէտք է կրթուին Տէրօմով, շատ կանուխէն անոնք պէտք են ճանչնալ զԱստուծոյ և վարժուին իրենց սիրտերը առարկայ ընել Ս. Հոգւոյն ազդեցութեան: Բարիքը և չարիքը շատ կանուխէն

երեան կ'ուզան: Կեանքը իր սկզբնաւորութեանը չըջանին իսկ կրնայ հոգեւոր ըլլալ: Աստուած կ'օրհնէ մարդը անոր տարբեր շնորհներուն յատուկ օրհնութիւններով. Ան ինչե՛ր կրնայ գնել նորարարող սրտերուն մէջ:

Մանկութեան միջոցին մարդը կարծուածէն շատ աւելի դիւրին կերպով կրնայ դէպի բարին ուղղութիւն տանել: Մանուկը չի կրնար կրօնքին փիլիսոփայութիւնը ըմբռնել, անոր կրօնական փորձառութիւնը անորոշ է տակաւին: Աւելորդ է պզտիկի մը ըսել թէ ինքը պէտք է վերստին ծնանի, պէտք է Դրիստոսի քառաթեան հաւատալ: Բայց կրնանք մանուկին ըսել թէ Աստուած մեր հայրն է, զինքը կը սիրէ, իրեն կ'օգնէ, ի՞նչ հնազանդ ըլլայ:

Պզտիկը ասոնք կը հասկնայ, և կը ջանայ բարի ըլլալ: Ապաշխարութիւն, հաւատք, հնազանդութիւն, սէր և այլնի պէս քրիստոնէական առաքինութիւնները մանուկին այս բարի ըլլալու ջանքին մէջ կը գտնուին արդէն: Մանուկը բաւեր թոթովելու չսկսած՝ նոր կեանքի մը համար պէտք եղած ճշմարտութիւնը և ոյժը կրնայ իր ծնողքէն առնել, որոնց կեանքը կենդանի Աւետարան մ'է: Այս կերպով շատ մը մանուկներ կանուխէն քրիստոնէական կեանք մը ապրած են: Ընտանիքը, եկեղեցին և դպրոցը պէտք են հոգեւոր կեանքը նոր սերունդին ազդեցիկ և գրաւիչ ընծա-

յին, որպէսզի եկեղեցիի անդամները պզտիկ հասակէն հասնին Մօրավեան եղբայրներու մէջ եղածին պէս: Այսպիսի եկեղեցիներու մէջ յառաջ կուգան ճշմարիտ և տեական պատու տուող հոգեւոր արթնութիւններ: Ապրիլ-գործ մը որ լաւ աշգիւի մը կուզէ տէր դառնալ, ծերացած որթատունկի արմատներ չի տնկեր, այլ նոր մատղաշ ոստեր կը տնկէ: Լաւ բնատանիքի մը տէր դառնալու համար մէկը փոշոյէ գտնուած մանուկներ չի հաւաքեր, այլ երախտներէն կ'ուզէ զաւակներ մեծցնել:

Այս պատճառաւ ծնողքը պէտք է վառ պահեն կրօնասիրութիւնը տունի մէջ:

Կրնայ հասկցուիլ թէ ի՞նչպէս Բրիտոնեայ ճանչցուած մարդերը չա՞րարարոյ զաւակներ կ'ունենան: Կրօնատէր ճանչցուած կարգ մը մարդիկ անախտութ բնաւորութիւն և վարք կունենան, որոնք կրօնքը զգուշիկ կը դարձնեն իրենց զաւակներուն համար: Անոնք տունը Ս. Գիրք կը կարդան, բարձրաձայն կ'աղօթեն, իրենց զաւակներուն կրօնատէր ըլլալ կը պատուիրեն: Բայց այս ամբողջը ապարդիւն կը մնան:

Ծնողքին կողմանէ զաւակներուն հանդէպ յոյց տրուած անխաղտութիւնը շատ անգամ կ'արգիլէ ճշմարիտ կրօնասիրութեան յառաջ գալը: Զաւակները բո՛ւ կը նկատուին, միշտ անոնց մասին կը գանգատին, եթէ չ'ամէնան կ'ուզեն գանոնք կամ փողոցը և կամ ուրբանոց մը գնել: Անհաւատի մը չափ իրենց վիճակէն զժպոհ կը դտնուին: Այսպիսի ծնողներ չեն կրնար քրիստոնեայ զաւակներ ունենալ:

Ծնողքին անսկզբութիւն և անխաղտութիւնը երկրորդ մէկ արդեւքը կը կազմէ: Անոնց կնանքը և խօսքը իրարու համաձայն չեն: Բարեկեցիկ բնտանիք մը կը ճանչնայի: Գրէթէ անթերի էին իրենց բնտանեկան աղօթքը կատարելու մէջ. երբեմն իրենց զաւակներէն մէկուն կամ երկուքին քարոզիչ ըլլալուն մասին փափաք կը յայտնէին: Սակայն զաւակներէն ոչ մէկը այսպիսի փափաք մ'ունէր: Անոնցմէ մէկը ինծի ըսաւ. «Ես չեմ կրնար քրիստոնեայ ըլլալ, քանի ես հօրս քովը կը գտնուիմ»: Ան իր աղօթքներուն մէջ սուրբ մը կ'երեւայ, բայց անհաւատ մը չի կատարիր իր վաճառականութեան մէջ ըրածը: Անոր աղօթքները և գործերը կեղծիք են: Ան երբէք չէ այն մարդը որ երեսալ կուգէ»:

Կարգ մը ծնողքներու մէջ գտնուած անխաղտութիւնը ուրիշ արդեւք մըն է հոգեւոր կեանքի դէմ: Անոնք անգիտակից են ատոր: Անոնք կը նեղանան եթէ ուրիշները յայտնեն թէ իրենք այսպիսի բնաւորութիւն մը ունին: Ըշմարտութեան ոգին պակաս է անոնց մէջ. անոնք կը ստեն իրենց գործերովը, եթէ ոչ լեզուով: Անոնք գոթը իրեւ ըզգեստ միայն հագած են. անոնց բարեկամութիւնը կեղծիք մ'է որուն իրենք գիտակից չեն, քանզի կեղծիքը իրենց համար բնական եղած է: Շատ մը քրիստոնէական զգացումներ կը տածեն. աղօթիկ իրենց համար սովորութիւն մ'է եղած: Բայց իրենց բոլոր կեանքը ուրիշներուն արուեստակեալ կը թուի: Այսպիսի ծնողքներու քով հոգեւոր կեանք չի մեծնար:

«Նոր Աւետարեւր» ի փոփաքն է. օգնել բոլոր ծնողքներուն՝ տուներու մէջ հոգեւոր միջավայր մը յառաջ բերելու համար, որպէս զի անոնք կարենան իրենց զաւակները քրիստոնեայ մեծցնել: Ծիշդ այս նպատակաւ «Ընտանեկան Աղօթք» ի բաժին մը կը պարտնակէ թերթս: Կը յանձնարարենք բոլոր ծնողքներուն որ այս մասը օգտագործեն և մշակեն աղօթքը բնտանեկան յարկին տակ:

Կ. Գ. Գ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ

Ա. շրջան. տարիք, 3-7: Այս տարիշընջանին որոշապէս երեան կուգան անոնց նըմանցնելու ու հետաքրքրութեան բնազդները և յիշողութեան ու երեւկայութեան կարողութիւնները:

Այս նմանցնելու կարողութիւնը կը սկսի նոյն խոկ օրօրոցէն, մօրը ժպտովը: Երբ նա կը ժպտի մանուկն ալ կը ժպտի: Փոքրիկ արեւոյց մէջ զօրաւոր միտում մը կայ նմանցնելու իրենց տեսածը ուրիշներէն, իրենց ծնողքէն ու իրենց մեծերէն: Այս ընդունակութիւնը մեծ գեր կը կատարէ մանկանց բնաւորութիւնները կազմելու մէջ: Հոս չե՛տիլ կուզենք միջավայրին ունեցած ազդեցութիւնը անոնց բնաւորութիւնները ձեւելու ու կազմապարելու մէջ: Անոնք կը կաղմուին մաս առ մաս աղուն գիտակցութեամբը և կամ անգիտակցութեամբը, որոնց համազուտաբը հաւա-

սար է անոր նկարագրին: Որովհետև անձի մը նկարագիրը հաւատարմ է, իր բնաւորութեանց ստորոշին:

Տղուն հետաքրքրութեան փափաքը հօրաւոր է այս շրջանին մէջ (3-): Մանուկը յաճախ կը ձանձրացնէ իր ծնողքը իր կրկնակի հարցումներուն տեղատարափովը: Մայրիկ, ինչո՞ւ ասիկայ այսպէս է, ինչպէ՞ս եղաւ և ուրիշ հարցումներ կը տեղան տղուն բերնէն: Անոր այս զխանալու, հետաքրքրութեան փափաքը էական պահանջք մըն է, որ պէտք է զոհանջով ճշգրիտ պատասխաններով: Հետաքրքրութիւնը մանուկին մտաւոր զարգացման հիմնաքարն է, և հարցումները անոր մանկունակ հոգիին ինքնարուխ արտայայտութիւններն են; որ պարտաւ հոգ մը կուզեն ծաղկելու և ուսնանալու: Այդ կենսատու սողմը պէտք է խամրեցնել յանդիմանական պատասխաններով, այլ յագեցնել զայն զոհանջով տեղեկութիւններով և ծանօթութիւններով:

Մանուկը չափազանց եռանդաւոր է այս օտարի մէջ: Ինչպէ՞ս կրնանք ուղղութիւն տալ անոր այս եռանդաւոր զգացումներուն, հորոնք այս տարիքին մէջ սանձել անհարկի կը թուի: Անգամ մը մայր մը ըսաւ իր վեց տարեկան զաւակին՝ որ զրազած էր այդ բոլորէն իր խաղալիքներով, «Մայմէ՛ն, գու խաղալիքներդ անմիջապէս իրենց տեղը դի՛ր, և հոս եկուր»: Տղան սապէս պատասխանեց, «Ես չեմ ուզէր քու ինծի ըսածդ ընել. ես պիտի ընեմ ինչ որ իմ անձս կը հրամայէ ինձ այս բոլորէն»: Տղուն այս վարմունքը անհնգանկութիւն էր իր մօրը խօսքին հանդէպ: Շատ անգամ իրաւունք ալ կուտանք որ մայր մը ապտակներ իջեցնէ իր զաւակին երեսին: Այո, այս է տղայէտ մօր մը ընելիքը: Իսկ ուսեալ մայր մը երբէ՞ք չի նեղանար այսպիսի անհնաւանդութեանց պարագային և կը խօսի քաղցրութեամբ ո՛չ թէ հրամայական շեշտով: հասկացուցութեամբ և ո՛չ թէ բարկութեամբ: Ան կարող է ուղղելու իր զաւակին այս եռանդութեան ու յամաւորութեան բնագոյնը քննադատութեամբ, փողովութեամբ ու հասկացողութեամբ:

Բ. Շրջան. տարիք. 7-12: Այս շրջանին զլիսաւոր յատկութիւններն են, երեւակայութիւն, անհատականութեան զգացումը, առանձին գործելու փափաքը, ինքնազուխ և

ինքնավար ըլլալու միտումը, և քիչ մը վերջը խումբեր կազմելու և միասին խաղալու բնագոյնը, և կրօնական և քարոյական զգացմանց զարթոյնումը: Ուսումնասիրել տղայոց յարափոփոխ մտային գործունէութիւնները իւրաքանչիւր ուսուցիչին և նոյնիսկ ծնողքին պարտականութիւնն է:

Դաստիարակութեան համար պէտք է հետեւեալ կետերը նկատի առնենք: Ա. Անձնական յարաբերութիւն պէճ և մշակող մանկանց հետ: Աշակերտին հետ ըլլալ խաղընկեր, զասընկեր, զործի ընկեր, և վերջապէս անոր հետ ապրիլ: Աշակերտները կը սորվին ազդուելով մեր անձէն ո՛չ թէ մեր խօսքերէն: Կեանքը միայն կրնայ ազդել մանկանց նորարոգող ընդունակութեանց վրայ: Բ. հասկացողութիւն: Մանուկը շատ լաւ կը հասկնայ իր մեծին կամ ուսուցիչին համակրանքի ատիճանը, և ըստ այնմ փոխադարձ զիրքի մէջ կը գնէ ինքզինքը անոնց հանդէպ: Համակրանքը պարտաւ հոգ մըն է, որուն մէջ կը բուսնի սիրոյ ծաղիկը: Բէսթալծծի մասին կը պատմուի թէ՛ իր աշակերտները անոր ապտակներն անգամ կը սրէին: Գ. Գործնական մեքոն մը: Հարաթափան և կամ ամսական արձանագրութիւն մը պահել երկու տարբեր բնաւորութեանց տէր աշակերտաց վարք ու բարքի մասին, և ատկից օրինակներ բերել միւս աշակերտներուն:

Այսքան համառօտ տեղեկութիւնէ յետոյ ջանանք վերլուծելու դաստիարակութեան ունեցած առնչութիւնը մանկանց նկարագրիւրը կազմելու գործին մէջ: Ա. Դաստիարակութիւնը կը վարժեցնէ մանուկը ուղիղ խորհելու, զարգացնելով անոր իմացական կարողութիւնը բնական գիտութիւններով: Բ. Դաստիարակութիւնը կ'ազնուացնէ անոր զգացումները՝ անոր առջեւ գնելով բարիքն, նեղեցիկին ու ճշմարտին խէտը: Գ. Դաստիարակութիւնը կը դորացնէ մանուկին կամքը:

Ա. Դաստիարակութիւնը պէճ հիւսիսներէ մանուկը խորհելու եւ գտնելու իրականութիւնը: Ուղիղ խորհիլ և շիտակը գիտնալը երկու հասկացալիքներն են ճշմարտութեան խտէլին: Իւրաքանչիւր գիտութիւն առաջնորդելու է տղան աւելի լաւ խորհելու:

Բ. Պէտք է գործածել առարկայական մեթոտ, այսինքն առաջնորդել պատիկը առար-

կայէն դէպի գաղափարը, եւ պարզէն դէպի բազմադրեալը:

Դ. Ուսուցանելիք նիւթը պէտք է կերտել տղուն գիտցածին վրայ, իւրաքանչիւր նոր գաղափարը պէտք է շարժուի անոր գիտցածներուն, նոր սորվելիք տեղեկութիւնը պէտք է բարդել հինին վրայ, թէ ոչ տղան չի հասկնար որքան ալ բացատրես:

Տղուն հետաքրքրութիւնը իր դասին հետ իր հասկացողութիւնէն կախում ունի: Ուրիշն վերոյիշեալ երեք կէտերը, այսինքն (1) հարցընել գիտնալ, (2) պարզէն դէպի բազմադրեալ, (3) նորը բարդել հինին վրայ, էական միջոցներ են զարգացնելու տղուն խորհելու ընդունակութիւնը:

Մանկան նկարագիրը կազմելու գլխաւոր ազդակներն են անոր զգացումները, որոնցով զեղեցիկացիսկանը որոշ տեղ կը գրաւէ անոնց մէջ: Դրապէս ընդհանուր մէջ գաստանդարտ գասերէն գիւղապետութիւնը, զծաղրութիւնը եւ երաժշտութիւնը տարբեր միջոցներ են տղուն մէջ զարգացնելու գիւղացիութեան խտէալը:

Կ. Մանկան նկարագիրը կազմելու գլխաւոր ազդակներէն մին է անոր կամքը՝ որուն սկզբնական արտայայտութիւնները կը նշխարուին մանկութեան մէջ իր ինքնագործունէութիւնը, (չինելու եւ կերտելու փափաքը): «Իւրաքանչիւր անհատին նկարագիրը կախում ունի իր կամքէն եւ իր կամքի արամագրութիւնէն», կ'ըսէ հեղինակ մը: Հէրպերթ Սփենսըրը եւ էմմանուէլ Բանդ քայլ մ'ալ յառաջ երթալով ըսին թէ՝ աշխարհի մէջ ամենէն լաւ բանն է Բարի կամքը: Գերմանացի գաղափարապաշտ Ֆրիտց Է. Հեկէլ շեշտեցին թէ գաստարակութեան նըպատակն է կազմել բարոյական նկարագիր մը:

Մանկանց մէջ նկարագիր կազմելու առաջին քայլն է արթնցնել անոնց մէջ կամեցողութիւնը, որովհետեւ նկարագիրը կը կերտուի մաս առ մաս, տղուն բարի կամեցողութեամբ կ'ստատրուած գործերով: Կարճ խօսքով կրնանք ըսել թէ բարի նկարագիրը կը բղիթի բարի կամեցողութիւնէն, այսինքն տղուն այսինչ գործը ընելու եւ կամ չընելու արամագրութիւնէն: Ինչպէ՞ս կրնանք զարգացնել տղայոց այս բարի արամագրութիւնն ու յօժարութիւնը, որպէս զի գործեն ու սորվին:

Դաստիարակութեան առաջին քայլն է սիրցնել ուսուցանելիք գաղափարը եւ ոչ թէ սորվեցնելու աշխատիլ: Որովհետեւ աշակերտները սիրով կը սորվին այն ամէն բան՝ զոր կը սիրեն: Ասիկայ ուսուցիչէն կախում ունի:

Դասարանի մէջ առիթ տալ իւրաքանչիւր աղուն ինքզինքը արտայայտելու: Տրգան կը փափաքի միշտ դուրս տալ իր սորվածը, գիտցածը:

Ոյժ տալ տղայոց մտքի ստեղծագործող ընդունակութեանց, շարադրութիւն գրել տալով, ձեռագործի ու գեղարուեստի գասեր տալով:

Վերոյիշեալ երեք միջոցները, 1) գաս սիրցնել եւ հետաքրքրութիւն արթնցնել, 2) դասարանի մէջ առիթ տալ իւրաքանչիւր աղուն ինքզինքը արտայայտելու եւ 3) ոյժ տալ տղայոց մտքի ստեղծագործող ընդունակութեանց առաջ շարժառիթներ են, որոնք զօրծի կը մըղեն գանոնք: Յօժար եւ կամեցող ոգին անհրաժեշտ պայմաններ են զօրացնելու տղուն կամքը՝ հատարելով իր գաղափարական ամենորոշայ պարտականութիւնները: Իսկ վախը եւ ճնշումը յոռի միջոցներ են, որոնք կը մեղացնեն տղուն ձեռնբերելութեան ոգին եւ ընելու փափաքը:

Ուրիշն գաստարակութեան լուծն նպատակն է կազմել լաւ ունակութիւններ մանկութեան տարեշրջանին, եւ վարժեցնել գասնոնք ուղիղ գործածելու իրենց ունեցած բնածին մտային կարողութիւնները: Մանուկը՝ իր բնաւորութեամբ երբ իր վիճակին ձգուի կը վերածուի խոպան արտի մը, ուր կը բուսնին միայն փուշեր եւ տատաղներ: Իսկ կըրթութիւնը կը մօտենայ իր արօրով այս անմըշակ հողին՝ ու բուրաստանի կը վերածէ գայն ուր կը բուսնին հոտաւէտ ծաղիկներ լցնելով մթնոլորտը իրենց անուշութեամբ: Դաստիարակութիւնը կը մշակէ մանկան սիրտը եւ անոր շարժառիթներն ու միտումները, որոնց ամէն ոք կամ տէրն է եւ կամ բացարձակ ստրուկն է:

Արդի գաստարակութիւնը իր ամբողջ ոյժը կը թափէ որպէս զի մանուկները կազմեն լաւ բնաւորութիւն եւ գիւղեցիկ նկարագիր, որոնցմով միայն կարող պիտի ըլլանք փրկել մեր ազգին ու գեղորոշոյն նաւը:

Յ. Տ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Պերուքէն մեկի կը տեղեկագրեն պաշտօնական գրութեամբ մը:

Մինչև 1926ի սկիզբը Պէյրութի մէջ մէկ հատ կազմակերպուած Հայ Աւետ. եկեղեցի կար: Բայց 1925ին վերջերը ֆեմիլի մէջ բնակող ժողովուրդին փափաքին վրայ եկեղեցիիս վարչական ժողովը որոշեց որ հոն ալ սերոյն, անկախ եկեղեցի մը կազմակերպուի:

Վեր. Ե. Հատիտեան, որ մինչև վերոյշխալ թուականը քաղաքի եկեղեցիին հովիւն էր, այս կազմակերպութեան վրայ քաղաքի եկեղեցիին մէջ իր պաշտօնէն հրաժարեցաւ, և ընդունեց ֆեմիլի եկեղեցիին հովուութիւնը, զոր կը շարունակէ մինչև հիմա: Այսպէս Պէյրութի մէջ յառաջ եկաւ երկու Հայ Աւետ. եկեղեցիներ որոնք իրենց անունները իրենց գերբերէն անուելով կը կոչուին «Պէյրութ Քաղաքի Եկեղեցին» և «Պէյրութ Քեմիլի Եկեղեցին»:

Պէյրութ Քաղաքի Եկեղեցիին ներկայ հոգևոր հովիւն է Պատ. Ե. Կէօքկէօղլան, որ 1927ի չըջանաւարանելէն է Պէյրութի երիցական Աստուածաբանական ձեմարանէն: Այս եկեղեցին ունի շուրջ 600 հոգինոց ժողովուրդ մը և 149 երկսեռ եկեղեցւոյ անդամներ: Եկեղեցիին մէջ կայ Հոգեւորացի ժողովը, որ ազօթածոցովներ կ'ունենայ ամէն Կիրակի առաւօտ՝ պաշտամունքէն ժամ մը առաջ, և բաց է բոլոր ժողովուրդին: Երիտասարդ տղաքներ և աղջիկները կազմակերպուած են Ե. Ք. Զանից ընկերակցութիւն մը, որ այս տարի փայլուն յաջողութիւններ յոյց տուաւ: Ունինք նաեւ 50 հոգինոց երգչախումբ մը: Կայ նաեւ Մայրական ժողով մը, որ ամէն Զորեքշարթի կ'ունենայ իր ազօթածոցովները: Երկուշաբթի և Զորեքշարթի իրիկունները քաղաքին երեք տարրիկ թաղերուն մէջ, կը սարգուին ազօթածոցովներ, որոնք շատ օգտակար արգիւնքներ տուած են: Ամէն երեքշաբթի իրիկուն ալ եկեղեցիի սրահին մէջ ազօթածոցով տեղի կ'ունենայ:

Կիրակի օրերը կէսօրէ առաջ հայերէն լեզուով քարոզ կը արուի, իսկ կէսօրէ վերջ թուրքերէն լեզուով պաշտամունք կը կատարուի թրքախօսներուն համար, որպէսզի անոնք պատենութիւն ունենան Աստուծոյ խօս-

քը լսելու:

Վերոյշխալ բաժանումէն վերջ, երբ Վեր. Ե. Հատիտեան Քեմիլի հովուութիւնը ստանձնեց, այս բեմը գրեթէ տարիէ մը աւելի թաքիտուր մնաց: Այս անպատեհ դժբաղդութիւնը մեծապէս նշատեց եկեղեցիիս: Պատ. Ենովք Կէօքկէօղլանի պաշտօնի կանչուելէն վերջ եկեղեցիս մեծ յաջողութիւն և եռանդ ստացած է: Երիտասարդութիւնը իր թմրած և լճացեալ վիճակէն արթնցած և եռանդուն զործունէութեան լծուած է: Եկեղեցիին խուռներամ բազմութեամբ կը լեցուի Աստուծոյ խօսքը լսելու: Պատ. Ե. Կէօքկէօղլան ինքզինքը բոլորովին նուիրած է իր եկեղեցիին և իր ժողովուրդին, որուն հետ սերտ յարաբերութեան մէջ է:

ՊԵՐՈՒԹ ՔԱՂԱՔԻ ՀԱՅ ԱՒԵՏ.
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՂՈՎ.
ԿՆԻՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

ԿԻՐԱԿԻ. Լոյսի մեջ ֆաղեղ. Ա. Յովհ. 1. 1-7:

Այս հրաշալի պատգամին վրայ խորհած եւ: Յաւիտենական բանն է որ զայն մեկի կը բերէ: Ան կըսէ ի՞նչ Աստուած լոյս է: Այսինքն Աստուածային բնութիւնը անխառն հոգեորութիւն, մաքրութիւն, իմաստութիւն, սրբութիւն և փառք է: Կուզե՞ս Աստուծոյ հետ հաղորդակցիլ, պէտք է Անոր նմանիս խորհուրդով և զործով, ճշմարտութիւնը սիրես և անով ապրիս:

Այօրք. Ո՛վ Տէր, քեզմով կ'ապրինք և կը շարժինք ու կանք, բայց մեր աչքերը, որպէս զի քու հայրական ներկայութիւնդ տեսնենք և զգանք, սիրովդ մեր սիրտերը քեզի քաշէ: Մեզմէ կասկածն ու անհաւատութիւնը մէկ զի բրէ: Յանուն Յիսուսի: Ամէն:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. Զօրացի՛ր եւ ֆալսախոս եղիր սաղ. 27-7-11, 13-14: Ո՛վ իմ անձս, յոյսդ Տէրով վրայ դիր. Անիկայ սիրտդ պիտի զօրացնէ և հոգիդ պիտի հանդարտեցնէ: Աստուծոյ մօտ եղիր և պարտականութիւնդ կատարէ: Անիկայ քեզ պիտի պահէ վտանգներու և նեղութեան ատենը. մի՛ խոռովիր: Ան որ իր յոյսը Աստուծոյ վրայ դրած է վախճալու պատճառ չունի:

Այօրք. Աստուած իմ, օգնէ՛ որ քեզ կամքդ կատարելու մէջ չվարանիմ, չի յուսահա-

տիմ. վախկոտութիւնս Քու կամքիդ կատարուելու արդեւք թող չըլլայ: Շնորհդ առիւ որ Քեզ փառաւորեմ: Ամէն:

ԵՐԵԿՇԱԲԹԻ. խն մեղիս գիւս արդե. առդ. 51 1-3.7.10.13:

Յիսուս ըսաւ թէ մարմինի կորուստը հոգիին կորուստին հետ բազդատմամբ, ոչինչ է: Աշխարհի մէջ ամենա անբերելի բանը մեղի է. քանզի անիկայ հոգին Աստուծոյ կը գատէ:

Աղօթք. Ո՛վ Յիսուս, զո՞ւն ես Աստուծոյ դասը որ աշխարհի մեղքը կը վերցնես. Դուն չես ալ իմ մեղքերէս մաքրէ, որպէս զի չարը բարիին փոխեմ եւ զոր անապատի մէջ կենաց չարի աղբիւր մ'ըլլամ, քու սէրդ ուրիշներուն տանիմ, փառքիդ համար: Ամէն:

ՉՈՐԲԹԱԲԹԻ. Աստուծոյ քաղաքապետը. Մարկ. 4.26-32:

Կու՛ժե՛ս որ Աստուծոյ թագաւորութեան բարի սերմը քու սիրտդ եւ կեանքդ փոխէ: Ինչ որ Աստուծոյ քու մէջդ դրէր է գայն դրածո՛ւ: Շատ սիրէ, բնաւ մի՛ ատեր: Աստուծոյ տիեզերական բարիքին չի համաձայնող բան մը մի՛ ընէր, ինքզինքդ բոլորովին Տէրոջը կամքին նուէրը եւ ապաստէ, ժամանակին պտուղ պիտի ունենաս:

Աղօթք. Տէ՛ր, ամէն օր հոգիս Քեզ կը փնտռէ: Ամէն տեղ եւ խանութիւս, տանս, զբոսանքս եւ զբաղումս մէջ: Ուստի կամ խըմենք, զրենք կամ կարդանք, աղօթենք կամ զործենք, ուր որ ըլլանք, ինչ որ ընենք օրհնութիւններդ եւ սէրդ մեզի հետ են: Մեզի կ'օրհնես, մեզ կը պաշտպանես ու կը կերակրես. Կապալեմ, շնորհքդ անպակաս ըրէ ինձ: Ամէն:

ՀԻՆԿՇԱԲԹԻ. Աստուծոյ խօսքը երկրի վրայ: Ես. 55.8-13:

Աղօթք. Վեր երկինք նայէ: Ներող Աստուծոյ քեզի պիտի ողորմի: Վար երկիր նայէ: Աստուծոյ խօսքը հրաշք կը գործէ բնութեան մէջ, նախախնամութեան եւ շնորհաց աշխարհի մէջ: Խնդրէ իրմէ, եթէ ուզածդ չտանես, նա քեզ երկնային բարձունքները պիտի հանէ, անկէ զօրութիւն պիտի ստանաս քու հոգիդ տանելու:

Աղօթք. Հօր Աստուծոյ, արտիգ համար մշակներ յառաջ բեր, որ հասունցած ջորինը թող չի թափի եւ չգորսուի: Ս. հոգիդ զրկէ խաւար մէջ բնակողներուն: Արթնցար

Քու ծառաներդ տանելու համար Սբ. Աւետարանի պատգամները կարօտ հոգիներուն: Սիրոյդ համար: Ամէն:

ՈՒՐԲԱԹ. Հաւատքի պտուղը. Յովհ. 3.16-21:

Աստուծոյ աշխարհը սիրեց եւ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի մարդիկ Սբ. հոգիէն ծնանելով իրենք ալ Աստուծոյ որդիներ ըլլան: Անոր մահուամբը երկնային հօրը հետ հաշտուին: Երբ հաւատանք այս ճշմարտութեան եւ ընդունինք Յիսուսը իր մեր Մարգարէն, Քահանան եւ թագաւորը, Անիկա մեզ պիտի կառավարէ, ուսուցանէ եւ փրկէ: Ունի՛ս այս հաւատքը:

Աղօթք. Ո՛վ Աստուծոյ մեր հայրը, լուսաւորէ մեր միտքերը, որ քեզ ճանչնանք որ Քեզի պտուղ բերենք որ այս յոյսով մաքուր կեանք ապրինք, որ իրր Քու հաւակներդ երկիւղածութեամբ եւ սիրով քալենք Քու առջիկ: Ամէն:

ՇՍԲԱԹ. Հոգւով Աստուծոյ ծառայի: Սաղ. 12.1-4:

Քրիստոնէական կեանքը այսպիսի կեանք մ'է, որմէ հայն ապրողը երբեք չուզեր բաժնուիլ: Յիսուս զիտեր այդ կեանքի գտնուիքը: Ան կրցաւ բոլոր տաղանթներէն ու փորձանքներէն յաղթող դուրս գալ: Հոգի մեծութիւնը առանձնութեան մէջ, Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ է:

Աղօթք. Երկնաւոր հայր, տո՛ւր որ Քեզի հետ հաղորդակցութեամբ լայն սիրտ, բարձր խորհուրդներ եւ մաքուր կեանք մը ունենամ: Յիսուսի համար: Ամէն:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍ

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՄԵԴԱՒՈՐՆԵՐԸ Մարկ. 2. 1-17:

Յունուար 22

Պէտք է միշտ յիշենք թէ Յիսուսի գործը սկիզբէն հոգեւոր էր. (Մարկ. 1.8-15, 24, 38): Մարմնական բուժումները Իրեն համար առաջնակարգ կարեւորութիւն չունէին: Ան մարդկային հոգիին բժշկին էր:

Յասակագիծ. Մեր դասին մէջ երկու գէպքեր կան, 1) անդամաւորը 1-12, 2) մեղաւորներու հետ սեղանակից ըլլալ (15-17):

Ուսումնասիրութիւն. 1) Մեղաւորներու հետ սեղանակից ըլլալ. Յիսուս զբաւիչ անձնաւորութիւն մ'էր լքեալներուն եւ գէշ նկատուածներուն

համար: Ան քաղեց, խօսակցեցաւ, կերաւ և խմեց այսպիսի մարդերու հետ: Ան չ'ամչցաւ անոնց քովը տեսնուելէ, Ան չվախցաւ անոնց հետ միասին ապրելէ, Ան ինքզինքը անոնց բարեկամ չըլլալու չափ Սուրբ չնկատեց: Ինչու՞: Առողջութենէ վերջ ամենէն՝ աւելի ուշադրութիւն գրաւող բանն է հիւանդութիւնը: Յիսուս եկաւ մարդերու Առաւածային կեանք տալու, որմէ վերջ եկող էն կարեւոր բանը մեղքն է, որ առաւածային կեանքը անկարելի կը դարձնէ: Յիսուսի նպատակն է արմատախիլ ընել մեղքը և անոր տեղը ամէն մէկ մեղաւորի մէջ նոր կեանք մը դնել: Այս պատճառաւ Ան այսպիսի մարդերու քով կ'երթայ և անոնց մէջը կ'ապրի:

2) Անդառնայ՝ մարդը. Յիսուս այս մարդը առաջուրնէ կը ճանչնա՞ր: Նկատելի է հիւանդը բերդներուն հաստատամտութիւնը: Անոնց ջանքը՝ Յիսուսի վրայ իրենց ունեցած հաւատքին ապացոյցն է: Հիւանդը հաւատակից էր անոնց: Երբ Յիսուս իր առջեւ տեսաւ հիւանդը, կացութեան յառաջ բերած բոլոր կարեւորութիւնները ըմբռնեց, և իբր հագիլ բժիշկ՝ առաջին անգամ ըրաւ ինչ որ կ'ուզէր ընել: Ապա մարդուն մարմինը բըժշկեց: Մարդը հոգեւորապէս հիւանդ էր. Աստուծոյ հաղորդակցութենէն զուրկ և իր մեղքին մէջ մեռած: Յիսուս հոգեւոր բոյժը անոր ներկայացուց: Մարդը ընդունեց զայն և թէ լոնչապէս (Մարկ. 5.34): Յիսուս հիմայ ճիշդ նոյնը և աւելին մեղի կրնա՞յ ընել (Յովհ. 7.37. 39):

Դասեր. 1) Եկեղեցին չի կրնար պատահամար փրկել մեղաւորները. պէտք է ան նպատակը ունենայ ընելու, և ապա պէտք է անոնց բարեկամ ըլլայ: Եկեղեցին պէտք է մեղաւորներուն երթայ, առանց ակնկալելու որ անոնք իրեն զան: 2) Եկեղեցին առաջին զործն է հիւանդ հոգիները նկատի առնել, և զանոնք ապաստել և ուժովցնել հոգեւորապէս: Մեղաւորներու հետ մեր յարաբերութիւնը Յիսուսին կը նմանի՞: Պէտք է նմանինք կրնա՞նք նմանիլ (Յովհ. 20.21.22):

Յիսուս և Փարիսեցիները. Մարկ. 2. 18-3.6:

Յունկար 29

Յաւանկար՝ 1) Յիսուսի աշակերտները ծոմ չեն պահեր (18.22). 2) Աշակերտները Շա-

բաթի կանոնները չեն յարգեր (23.28). 3) Յիսուս ինքը կը մերժէ հնազանդիլ այս կանոններուն (3. 1,6):

Ուսումնասիրութիւն. Այս դասը մեղի կը տորվեցնէ թէ Յիսուսի դիրքը ինչ էր սկիզբէն իվեր Հրեայ առաջնորդներուն աւանդութիւններուն և կրօնական սովորոյթներուն հանդէպ: Պէտք է ուսումնասիրենք Յիսուսի այս դիրքը հոր միշտ պահեց և քարոզեց (Մարկ. 7. 1.23):

1. Յովհաննէս Փարիսեցիներու պէս քարոզեց ծոմապահութիւն իրր արժէքաւոր կրօնական զործ մը, մեղքի գիտակցութեան վերայ հիմնուած: Յիսուսի համար մեղքը նեւրուած և մոռցուած էր, կեանքի հիմը՝ Աստուծոյ սէրը, ներկայութիւնը և ոյժն էր, խառնուած այնպիսի ուրախութեամբ մը որ հին սովորութեան երբէ՛ք պէտք չէր թողուր:

2. Բազմաթիւ Շաբաթ օրուան օրէնքին հանդէպ Յիսուսի դիրքը՝ Լիւան Քարոզին մէջ ուրիշ օրէնքներու հանդէպ ունեցած դիրքին հետ: Յիսուս իր Շաբաթ օրը զործածելը արդարացուց անոր էական նպատակը նկատի առնելով: Շաբաթի զործածութեան մէջ զլիսաւոր սկզբունքներն են մարդկային զէպքերը, և Մեծիական թագաւորին կամքը:

3. Այս երրորդ զրուակը պաշտօնական է: Շաբաթ օրը Սինակոկին մէջ Յիսուս ինչ պիտի ընէ, մինչ Փարիսեցիները կը դիտեն զինքը: Ան քաղաքականութեամբ թէ համոզումով, վախով թէ քաջութեամբ պիտի շարժի:—Անվախօրէն Փարիսեցիներու վարդապետութեանց դէմ իր հակառակութիւնը յայտնեց իբր չորցած ձեռքով մարդը բժշկեց: Իր զիրքին տրամաբանութիւնը անպատասխանելի էր. Փարիսեցիները կամ պէտք էին տեղի տալ, և կամ Յիսուսը պէտք էին լռութեան ստիպել:

Դասեր. Արդար կեանքի մը համար Յիսուսի վարդապետութեան առաջնորդող տարրերն են մարդկային պէտք, ուրիշներու ծառայութիւն, նոր հոգեւոր փորձառութիւն մը և թագաւորին կամքը: Ան մերժեց սովորոյթէ, աւանդութիւնէ, քաղաքականութիւնէ և կամ վախէ կառավարուել: Ո՞ր չափանիշներու համեմատ կ'ապրինք: Նոր ապրելակերպեր, սովորութիւններ այնպիսի բաներ են որոնց հանդէպ պէտք է ողջամիտ դիրք մը բռնել:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶՐ

ԾՆՈՒՆԴԷՆ ՎԵՐՋ

Մեր փոքր ուսանողներէն չափերը՝ իրենց ծնունդի վաղանցը ուրախ, գուարթ անցընելէ վերջ՝ հիմայ դարձեալ իրենց դպրոցի դասերովը զբաղիլ սկսած են։ Մենք, եթէ ուզենք՝ կրնանք ծնունդի հաճոյքները վայելել ոչ թէ տարին մէկ օր, այլ տարուան բոլոր օրերուն մէջ ալ։

Փոքր աղայոց յատուկ թերթի մէջ հետեւեալ փոքր յօդուածը տեսայ. գրողը 15 տարեկան աղջիկ մըն է։—

«Երկու տարի առաջ, ծնունդին, մեր կիրակնօրեայ դպրոցի կարգը որոշեց ծնունդի նուէրներ զրկել կարօտ ու խեղճ մանկանց. մենք 35 հատ էինք, և այն օրէն սկսեալ մեր ձեռքը անցած չաքարի զրամները խնայողութեամբ աւելցուցինք։ Անկէ ի վեր տասնհինգ հատ նուէր զրկեցինք. ահաւասիկ առտնք են մեր նուէրները։— Զերմաչափ մը, մկրատ մը, և տաք ջրի թիթեղեայ շիշ մը զրկեցինք Հնդկաստանի մէջ հիւանդանոցի մը. նոյն երկրին ուրիշ մէկ քաղաքը զբաղող կուրանոցը զրկեցինք կոյրերու զրկութեամբ գրեւոր մը։ Նիկէի մէջ որը աղջկան մը ուսելիքի զբաղող զրկեցինք։ Կալիթայի հիւանդանոցի նրբերէն երկուքին մէջմէկ շրջագլխացուի նիւթեղէնը զրկեցինք։ Պաղեստինի Սալթ գիւղը զրկեցինք Սը. Գրոց պատկերներ կիրակ. Դպրոցի մանկանց համար։ Հարաւային Ափրիկէ քիչ մը դեղ զրկեցինք։ Մանտալիա զրկեցինք երկու ջրապրիկ զոգնոց և վարագոյր մը։

Նորվեգիայի մէջ տուն չունեցող փախստականի մը զբաղող զրկեցինք։ Նիկէի գեղ զրկեցինք։ Մօնկօլիոյ մէջ կոյր մանկանց օգնեցինք։ Մօնկօլիոյ ուրիշ մէկ քաղաքը զրկեցինք երեք ջերմաչափ և մէկ տաք ջրի շիշ։ Հարաւային Ամերիկա զրկեցինք եօթը Մուրր Գիրք։ Զոյզ մը սպարմիլյա զրկեցինք ձապա փոքրիկներու յատուկ հիւանդանոցի մը հասցէին։ Այսօր զրկեցինք Նազարէթ երեք վերմակ, և մէկ հատ մանկան զոգնոց։ Մենք երկրագունդին մէկ քարտէսը ունինք մեր դպրոցին մէջ, շատ մեծ քարտէս մըն է ան։ Երբ որ նուէր մը զրկենք, ահա զրկուած տեղը նկատ մը գծելով կը ցուցնենք այս քարտէսին վրայ։ Մենք կ'աշխատինք որ աշխարհիս ամէն կողմերը նետի նշաններով լեցնենք։ Մենք շատ ուրախ ենք, և ամէնքս ալ կ'աշխատինք որ զբաղողները՝ նորնուէրներ զրկելու համար. անշուշտ այս նուէրներուն ամէնը ծնունդի օրը չեն հասնիր իրենց զրկուած տեղերը, բայց երբ որ ալ հասնին առտնք իրենց հետ կը տանին ծնունդի ուրախութենէն մաս մը այն հեռաւոր կարօտեալներուն համար»։

Սիրելի փոքրիկ ընթերցողներ, ահա կիրակն. դպրոցի կարգ մը աշակերտներ, որոնք ձեր տարիքը ունին, և որոնք միշտ ուրախ են՝ որովհետեւ միշտ կ'աշխատին երջանկացնել խեղճերն ու կարօտները։ Առտնք ամէն օր ծնունդի օրհնեալ կիսնքը կ'ապրին։ Երանի այդ տղոց։

Կը խորհիմ թէ արդեօք միւր Կ. Դըպրոցներուն մէջ ևս այս տղոցը բաժնի կը բաժնար ընել։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԻԱԴՐԱԿԱՆ

Հոգևոր Կեանքի Բնականական Յարկին Տակ
ՎԵՐ. Կ. Յ. Յ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Դաստիարակութեան Դերը Յ. Տ. ՂԱԶԱՐԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ ԴԱՍ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Գիտական, Կրթական երկշաբաթաթերթ։

Արաօնատէր, Վեր. Կ. Յարութեան հան
Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Սըրլորեան
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Սուրիոյ համար տարեկան 2 Մէճիտ
Արաօնատէր » » 1 Տոլար

Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP, SYRIE